ձոր, ի գեղս որ կոչի Սրկղունս, ի դուռն սուրբ Գէորգայ և այլ սրբոց, որ ասա կան». Նույն ավետարանը այժմ իրենց յեկեղեցին, վոր շինել են հին յեկեղեցու քարերով, ս. Գեվորգ են անվանում, յերևի, անունը



Գեղեցիկ տեսարան. Հյուսիսի ափերին.

1642 թվին գնել և վոսն Ծատուր և նվիրել «ի դուռն սուրբ Գէորգայ Սրկղունուց եկեղեցւոյն»*։ Զուղայեցի մահտեսի Հակոբ վաճառականը 1665 թ. մի մաշտոց և գրել տալիս «յիշատակ Սորկղնոյ եկեղեցոյն, որ զանուն (s!) սբ Գէորք կոչի»**։ Այս վկայություններից տեսնում ենք, վոր Սրկղունքը հեռու չե Սպիտակավոր Աստվածածնից և Բոլորաբերդից, վոր իրար մոտ են, ինչպես և մոտ է սրանց ներկա Բաշքյանդը. Սրկղունքի յեկեղեցիներից մեկը կոչվում եր Սուրբ Յակոբ, Բաշքյանդի հին յեկեղեցու Ճացորդ (պատկ. 10) քարի վրա ևս կարդացվում է «սբ Յր» = սուրբ Յակոբ, վորով այլ ևս կասկածի տեղիք չե մնում Սրկղունքի և ներկա Բաշքյանդի նույնության մասին։ Հենց դյուղացիք հին յեկեղեցու վոր և է արձանագրությունից առնելով։

Նույն վտակի վերա է, Բաշքյանդից քիչ դեպի ցած Որթաքյանդը, վորի մերձավորության համար, կարելի է կարծել, թե նույնպես Պռոշյանների սեպհականություն է յեղել յուր ամրողջությամբ. բայց նորա մի մասի, Վարդանի բերդ կոչված տեղի համար, հաստատ գիտենք, վոր Որբելյանների սեպհականություն եր, Զեսարի ճյուղի։ Այդտեղ գտնվում է մի մեծ խաչքար՝ ներքևում այսպիսի արձանագրությամբ. **Կամաւ այ, ամենակալին ես Վարդալահ կանգնեցի զխաչս. յիշատակ է ծնողաց իմոց, ով կ... հողի մեջ մնացածը. իսկ խաչի կեդրոնում, երեսին. ՁԿ. իշխանութե պարոն Զեսարին. Ած ողորմի ասէք***։ Կան և ուրիշ խաչքարեր արձանագրություններով**։ Այսպի-

* Հավել. Բ. 7. 8. 9։

** Հավել. Բ. 10. Մահտեսի Հակոբ վաճառականը ապրում եր յուր կյանքի վերջին որերում Շատինու վանքում, վոր հեռու չե Բաշքյանդից կամ Սրկղունքից. այնտեղ նա ունի յերկու խաչքար արձանագրությամբ. Արար. 1888, 164. 171։ Նա գրել է և գրել տվել շատ ձեռագիրներ և նվիրել վանքերի կամ անհատների. 1661 թվին գրել է ինքը տումարի մասին վոտանավորով. ԵՄ.. ի № 2958. ձեռ. ինքն է գրել մասամբ և նկարել տվել յուր և յուր յեղբոր պատկերը։ Իբրև վաճառական ճանապարհորդել է աշխարհի զանազան կողմերը, մի գործունեայ մարդ։

* Христ. Восток. 1913, մեր հոդվածը, Потомство Тарсаича յեր. 321/2։

** Օրթաքյանդի արևմտյան կողմը, հին գերեզմանատանը, մի մեծ խաչքարի վերա գրված է. «Այս խաչս Քսի արեամբ..(.ներ?)կած է. թ. ՁԻԶ»։ Սրանից քիչ արևելք մյուս գերեզմանատանը աչքի է ընկնում յերեք աստիճանների և պատվանդանի վերա կանգնած մի խաչքար. Ի թ. ՁՀ(?)է. Այս է հանգիստ Գրիգորի»։ Մի ուրիշ խաչքարի վերա. «Հանկիստ Բեկի Խաթունիս որ կեսաւրեայ փոխեցաւ